

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2026 թվականի օգոստոսի 25-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ՇՄԳԸԲԿ-ԷԱՃԱՊԶԲ 2026-23»**

Գյումրու Վ. Աբաջյանի Անվան Ընտանեկան Բժշկության Կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար **«Ուլտրաձայնային հետազոտությունների համալիր երեք տվիչներով սարք»**-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՇՄԳԸԲԿ-ԷԱՃԱՊԶԲ 2026-23»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 19-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 25-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

Հարգելի գործընկեր, Ուսումնասիրելով մրցույթի տեխնիկական բնութագիրը՝ խնդրում ենք պարզաբանել դրանում ներառված որոշ տեխնիկական պահանջների հիմնավորվածությունն ու դրանց համապատասխանությունը գնումների օրենսդրությամբ սահմանված մրցակցության ապահովման սկզբունքներին: 1. Մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշված որոշ պահանջներ, ըստ իրենց ձևակերպման և կիրառվող տեխնոլոգիական լուծման, կարծես թե համապատասխանում են կոնկրետ արտադրողի՝ Mindray ընկերության կողմից կիրառվող տեխնոլոգիային: Օրինակ՝ բնութագրում նշված է. «Տեխնոլոգիան պետք է ներառի՝ Դինամիկ պիքսելային կիզակետում (DPF)»: Մեր ուսումնասիրության համաձայն՝ «Dynamic Pixel Focusing (DPF)» տեխնոլոգիական լուծումը կիրառվում է Mindray ընկերության սարքավորումներում, մինչդեռ շուկայում առկա այլ արտադրողներ նույն գործառույթն ապահովում են այլ տեխնոլոգիական լուծումների միջոցով: 2. Առնվազն՝ Sound Touch Elastography / առանձին պատվերով/» - այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծում, բայց ձեր կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց այդ արտադրողի կողմից կիրառվող տեխնոլոգիան: Նշված է փակագծերում առանձին պատվերով, ինչը նորից խոսում է նրա մասին, որ բնութագիրն արտագրված է արտադրողի տեխնիկական գրքից: 3. Առնվազն IVF, RIMT ծրագրային ապահովումներով» - կարելի է միայն ենթադրել, թե որ ապահովումների մասին է խոսքը, քանի որ նշված չէ հայերեն նկարագրությունը, սակայն կարելի է իմանալ, թե օրինակ ինչ է նշանակում RIMT

ապահովումը, Mindray ընկերության տեխնիկական գրքից: 4. Առնվազն /Gray Map/; /Tint Map/;» - կարելի է միայն ենթադրել, թե որ ապահովումների մասին է խոսքը, քանի որ նշված չէ հայերեն նկարագրությունը, սակայն կարելի է իմանալ թե օրինակ ինչ է նշանակում Tint Map ապահովումը, Mindray ընկերության տեխնիկական գրքից: 5. Տեխնիկական բնութագրում նշված է «Ֆայլերի ընդլայման ֆունկցիա» պահանջը: Խնդրում ենք պարզաբանել, թե տվյալ ձևակերպմամբ կոնկրետ ինչ ֆունկցիա կամ տեխնիկական հնարավորություն է նկատի առնվում: 6. Նախապես տեղադրված գործառնություններով խելացի /օրինակ Smart/ ծրագրային առնվազն հետևյալ փաթեթների առկայություն՝ - smart 3D - smart OB - smart NT - smart FLC - smart Thyroid - smart Brest - smart Hip - smart HRI - smart Bladder – անհասկանալի է թե ինչ պահանջ է դրել պատվիրատուն նման բան ձևակերպելով, սակայն կարելի է նման ձևակերպումներ գտնել Mindray ընկերության տեխնիկական գրքից, որոնք չկան այլ արտադրողների մոտ: 7. Image quality: HPen/HGen/HRes or HPen/ HPen-FFR/HGen/HRes/HRes-FFR» - անհասկանալի է թե ինչ է նկատի ունեցել պատվիրատուն, սակայն կարելի է նման ձևակերպումներ գտնել Mindray ընկերության տեխնիկական գրքից, որոնք չկան այլ արտադրողների մոտ: 8. Անատոմիական M /Free Xros M/ ռեժիմ - այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծում, բայց ձեր կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց այդ արտադրողի կողմից կիրառվող տեխնոլոգիան: 9. Մատակարարման պարտադիր անհրաժեշտ կոնվեքս և գծային տվիչների համար նշված է, որ նրանք պետք է համատեղելի լինեն կամ գործարկվեն STQ ռեժիմի ժամանակ, որի մասին արդեն նշել ենք, այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծումներ այլ անվանումներով, բայց ձեր կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց Mindray-ի կողմից կիրառվող տեխնոլոգիան: Խնդրում ենք հստակ և հիմնավորված ներկայացնել, թե ի՞նչ օբյեկտիվ տեխնիկական կամ ֆունկցիոնալ անհրաժեշտությամբ են պայմանավորված տեխնիկական բնութագրում ներառված վերոնշյալ պահանջները: Միաժամանակ առաջարկում ենք վերանայել նշված պահանջները, ըստ անհրաժեշտության փոփոխել տեխնիկական բնութագիրը և այն համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին՝ ապահովելով հավասար և արդար մրցակցային պայմաններ բոլոր հնարավոր մասնակիցների համար:

Ի պատասխան գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրի վերաբերյալ ներկայացված հարցման՝ գնահատող հանձնաժողովը հայտնում է հետևյալը: Տեխնիկական բնութագիրը կազմվել է՝ ելնելով Պատվիրատուի փաստացի կլինիկական կարիքներից, գնվելիք բժշկական սարքավորման նպատակային նշանակությունից և անհրաժեշտ տեխնիկական, կլինիկական ու ֆունկցիոնալ հնարավորություններից: Համակարգը նախատեսված է բազմապրոֆիլ բուժհաստատության համար՝ սրտաբանական, անոթային, որովայնային, մանկաբարձական-գինեկոլոգիական, մկանա-կմախքային, էլաստոգրաֆիկ և շտապ բժշկության հետազոտությունների իրականացման նպատակով, ինչով պայմանավորված են տեխնիկական բնութագրով սահմանված ռեժիմների և ծրագրային փաթեթների պահանջները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը: Հետևաբար Պատվիրատուն իրավասու է սահմանել իր իրական կարիքի լիարժեք բավարարման համար անհրաժեշտ տեխնիկական, ֆունկցիոնալ և որակական հատկանիշներ: Տեխնիկական բնութագրում օգտագործված տեխնոլոգիական անվանումները, այդ թվում՝ թեք գծերում կամ փակագծերում նշվածները, բերված են որպես համապատասխան գործառնության կամ տեխնոլոգիայի օրինակ: Դրանց նկատմամբ կիրառվում է «կամ համարժեք» սկզբունքը: Առաջարկվող լուծման համարժեքությունը գնահատվելու է դրա ապահովված տեխնիկական և ֆունկցիոնալ արդյունքով և պետք է հիմնավորվի արտադրողի պաշտոնական տեխնիկական փաստաթղթերով:

Կետ 1 — Դինամիկ պիքսելային կիզակետում (DPF)

Տեխնիկական բնութագրի 1.1 կետում արդեն իսկ նախատեսված է «ZONE sonography® սկանավորման կամ համարժեք տեխնոլոգիայի» կիրառման հնարավորություն: Նշված ձևակերպումը տարածվում է ամբողջ կետի, այդ թվում՝ DPF բաղադրիչի նկատմամբ: DPF-ի վերաբերյալ պահանջի բովանդակությունը ծրագրային ճառագայթաձևավորման միջոցով պատկերի յուրաքանչյուր կետի դինամիկ կիզակետման ապահովումն է՝ արձակման և ընդունման փուլերում: Նմանատիպ լուծումները տարբեր արտադրողների կողմից կարող են ներկայացվել տարբեր անվանումներով: Հետևաբար ընդունելի է ցանկացած արտադրողի տեխնոլոգիա, որն ապահովում է պահանջվող համարժեք տեխնիկական և ֆունկցիոնալ արդյունքը:

Կետ 2 — Sound Touch Elastography, STE և STQ

Պահանջը վերաբերում է ոչ թե որևէ կոնկրետ արտադրողի տեխնոլոգիային, այլ սահքային ալիքի էլաստոգրաֆիայի իրականացման հնարավորությանը: Տվյալ տեխնոլոգիայի դեպքում ակուստիկ իմպուլսի միջոցով հյուսվածքում առաջանում են լայնակի ալիքներ, որոնց տարածման արագությունը պայմանավորված է հյուսվածքի կոշտությամբ: Տարբեր արտադրողներ համապատասխան գործառնությոը կարող են ներկայացնել տարբեր անվանումներով, օրինակ՝ Shear Wave, ElastQ Imaging, Sound Touch Elastography, STE, S-Shearwave, SWM, SWE և այլն: «Sound Touch Elastography», «STE» և «STQ» անվանումները բերված են որպես օրինակներ: Ընդունելի է ցանկացած արտադրողի համարժեք սահքային ալիքի էլաստոգրաֆիայի տեխնոլոգիա:

Կետ 3 — IVF, IMT և RIMT

Նշված հապավումներն օգտագործվում են հետևյալ գործառնությունները նկարագրելու համար՝

- **IVF**՝ ֆոլիկուլների չափման և հաշվարկի ծրագրային փաթեթ,
- **IMT**՝ ինտիմա-մեդիա հաստության չափման հնարավորություն,
- **RIMT**՝ ինտիմա-մեդիա հաստության ավտոմատ չափում իրական ժամանակում:

Տվյալ գործառնությունները տարբեր արտադրողների սարքավորումներում կարող են ունենալ տարբեր անվանումներ: Հայտերը գնահատվելու են պահանջվող չափումների և հաշվարկների իրականացման հնարավորությամբ՝ կիրառելով «կամ համարժեք» սկզբունքը:

Կետ 4 — Gray Map և Tint Map

Gray Map և Tint Map հասկացությունները վերաբերում են ուլտրաձայնային պատկերի ցուցադրման և մշակման կարգավորումներին՝ համապատասխանաբար մոխրագույն սանդղակի քարտեզի և պատկերի երանգավորման քարտեզի ընտրությանը: Դրանք ուլտրաձայնային պատկերավորման ոլորտում կիրառվող գործառնությանին հասկացություններ են: Ընդունելի են նաև այլ անվանումներով ներկայացված համարժեք լուծումներ, եթե դրանք ապահովում են պահանջվող պատկերի ցուցադրման և մշակման հնարավորությունները:

Կետ 5 — «Ֆայլերի ընդլայման ֆունկցիա»

«Ֆայլերի ընդլայման ֆունկցիա» ձևակերպմամբ նկատի է առնվում հետազոտության արդյունքների և պատկերների համապատասխան ֆայլային ձևաչափերով պահպանման, մշակման և արտահանման հնարավորությունը: Տեխնիկական բնութագրի հետագա մասում տվյալ պահանջը հստակեցված է՝ նախատեսելով **BMP, JPG, TIFF, DCM, AVI, MP4 և RAW** ձևաչափերով աշխատելու հնարավորություն: Հետևաբար պահանջը վերաբերում է նշված կամ դրանց համարժեք ֆայլային ձևաչափերով աշխատանքի ապահովմանը:

Կետ 6 — Խելացի ծրագրային փաթեթներ

Տեխնիկական բնութագրի 1.2.3 կետում «Smart» անվանումը բերված է որպես օրինակ: Պահանջը վերաբերում է հետևյալ կլինիկական գործառնությունների ավտոմատացմանը՝ անկախ արտադրողի կիրառած առևտրային անվանումներից՝

- ազատ ձեռքի 3D վերակառուցում,
- մանկաբարձական բիոմետրիայի ավտոմատ չափում,
- պտղի ծոծրակային թափանցիկության՝ NT-ի ավտոմատ չափում,
- ֆոլիկուլների ավտոմատ հաշվարկ,
- վահանագեղձի հանգույցների կառուցվածքային գնահատում,
- կրծքագեղձի գոյացությունների կառուցվածքային գնահատում,
- նորածնի ազդրի հողի անկյունների չափում՝ Graf մեթոդով,
- հեպատո-ռենալ ինդեքսի հաշվարկ,
- միզապարկի ծավալի ավտոմատ չափում:

Ընդունելի է ցանկացած արտադրողի ծրագրային փաթեթ, որն ապահովում է թվարկված գործառնությունները՝ անկախ փաթեթի առևտրային անվանումից:

Կետ 7 — HPen, HGen և HRes

Նշված պահանջը վերաբերում է ներդաշնակ պատկերավորման հաճախականային ռեժիմների ընտրության հնարավորությանը, որը տարբեր արտադրողների համակարգերում կարող է ներկայացվել տարբեր անվանումներով:

Պահանջվող ռեժիմների գործառնությանին նշանակությունը հետևյալն է՝

- **HPen (Harmonic Penetration)**՝ թափանցելիությանը միտված ռեժիմ՝ ցածր ներդաշնակ հաճախականությամբ, խորը տեղակայված կառուցվածքների հետազոտման համար,
- **HGen (Harmonic General)**՝ ընդհանուր և հավասարակշռված ռեժիմ՝ միջին ներդաշնակ հաճախականությամբ,
- **HRes (Harmonic Resolution)**՝ լուծունակությանը միտված ռեժիմ՝ բարձր ներդաշնակ հաճախականությամբ, մակերեսային կառուցվածքների հետազոտման համար,
- **HPen-FFR և HRes-FFR**՝ թափանցելիության և լուծունակության ռեժիմների տարբերակներ՝ լրացուցիչ հաճախականային մշակմամբ:

Ռեժիմների քանակը՝ երեք կամ հինգ, կախված է տվիչի տեսակից, ինչն արտացոլված է տեխնիկական բնութագրի «or» ձևակերպմամբ: Ընդունելի է ցանկացած արտադրողի համարժեք ռեժիմային լուծում՝ անկախ կիրառված անվանումներից:

Կետ 8 — Անատոմիական M ռեժիմ

Պահանջը վերաբերում է անատոմիական կամ ազատ անկյան M ռեժիմի առկայությանը: Free Xros M անվանումը բերված է որպես տվյալ գործառնության օրինակ:

Անատոմիական M ռեժիմը տարբեր արտադրողների սարքավորումներում կարող է ներկայացվել տարբեր անվանումներով: Ընդունելի է ցանկացած համարժեք լուծում, որն ապահովում է պահանջվող անատոմիական M ռեժիմի գործառնությունը:

Կետ 9 — Տվիչների էլաստոգրաֆիկ կիրառություն

Կոնվեքս և գծային տվիչների կիրառությունների ցանկում «STE&STQ» նշումը բերված է որպես համապատասխան գործառնության օրինակ:

Պահանջն այն է, որ մատակարարվող կոնվեքս և գծային տվիչներն ապահովեն սահքային ալիքի էլաստոգրաֆիայի իրականացումը՝ անկախ արտադրողի կիրառած տեխնոլոգիական կամ առևտրային անվանումից: Ընդունելի է ցանկացած արտադրողի համարժեք լուծում, որը տվյալ տվիչներով ապահովում է պահանջվող էլաստոգրաֆիկ հետազոտությունների իրականացումը:

Հարգելի մասնակից ձեր հարցմամբ մատնանշված DPF, Sound Touch Elastography, STE, STQ, IVF, IMT, RIMT, Gray Map, Tint Map, Smart ծրագրային փաթեթներ, HPen, HGen, HRes և Free Xros M անվանումների առկայությունը չի նշանակում որևէ կոնկրետ արտադրողի

սարքավորման ձեռքբերման պարտադիր պահանջ: Պատվիրատուի համար որոշիչ է պահանջվող տեխնիկական, կլինիկական և ֆունկցիոնալ արդյունքի ապահովումը, այլ ոչ թե համապատասխան գործառույթի կամ տեխնոլոգիայի անվանման նույնականությունը որևէ արտադրողի կողմից կիրառվող անվանմանը: Միայն այն հանգամանքը, որ որոշ արտադրողներ համապատասխան գործառույթներն իրենց տեխնիկական փաստաթղթերում ներկայացնում են նույն կամ նման անվանումներով, բավարար հիմք չէ եզրակացնելու, որ տեխնիկական բնութագիրը կազմվել է որևէ կոնկրետ արտադրողի համար կամ սահմանափակում է մրցակցությունը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 109-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման արդյունքի վերաբերյալ դրական եզրակացություն կարող է տրվել նաև այն դեպքում, երբ մատակարարված ապրանքի որակական հատկանիշները գերազանցում են պայմանագրով սահմանված պահանջները՝ ապահովելով Պատվիրատուի կարիքի բավարարումը: Հետևաբար ցանկացած արտադրողի կողմից առաջարկվող լուծում, որն արտադրողի պաշտոնական տեխնիկական փաստաթղթերով հիմնավորված կերպով ապահովում է տեխնիկական բնութագրով պահանջվող համարժեք կամ ավելի բարձր տեխնիկական, կլինիկական և ֆունկցիոնալ արդյունքը, կգնահատվի սահմանված պահանջներին համապատասխան:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄԳԸԲԿ-ԷԱՃԱՊԶԲ 2026-23» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Թ. Գաբրիելյան:

Հեռախոս՝ 0312 5 65 17:

Էլեկտրոնային փոստ՝ c-familymedicine@mail.ru :

ОБЪЯВЛЕНИЕ

о разъяснении приглашения

Текст настоящего объявления утвержден оценочной комиссией решением № 2 от 25 августа 2026 года и публикуется в соответствии со статьей 29 Закона Республики Армения «О закупках»
Код процедуры: «ՇՄԳԸԲԿ-ԷԱԾԱՊՁԲ 2026-23»

Оценочная комиссия процедуры закупки с кодом «ՇՄԳԸԲԿ-ԷԱԾԱՊՁԲ 2026-23», организованной в целях приобретения **«Комплекса для ультразвуковых исследований с тремя датчиками»** для нужд ЗАО «Центр семейной медицины имени В. Абаджяна г. Гюмри», ниже представляет вопрос, полученный 19 августа 2026 года относительно приглашения, и разъяснение, предоставленное 25 августа 2026 года:

Вопрос № 1

Уважаемый коллега! Изучив техническую спецификацию конкурса, просим разъяснить обоснованность включенных в нее отдельных технических требований и их соответствие установленным законодательством о закупках принципам обеспечения конкуренции. 1. В частности, некоторые требования технической спецификации по своей формулировке и применяемому технологическому решению, по всей видимости, соответствуют технологии, используемой конкретным производителем — компанией Mindray. Например, в спецификации указано: «Технология должна включать динамическую пиксельную фокусировку (DPF)». Согласно нашему исследованию, технологическое решение Dynamic Pixel Focusing (DPF) применяется в оборудовании компании Mindray, тогда как другие представленные на рынке производители обеспечивают ту же функцию посредством иных технологических решений. 2. «Не менее: Sound Touch Elastography /по отдельному заказу/» — данная технология применяется только одним производителем, а именно компанией Mindray. Другие компании используют иные технологические решения, однако в представленной Вами спецификации прямо указана технология, применяемая именно этим производителем. Указание в скобках «по отдельному заказу» вновь свидетельствует о том, что спецификация переписана из технического каталога производителя. 3. «Не менее чем с программным обеспечением IVF, RIMT» — можно лишь предполагать, о каком программном обеспечении идет речь, поскольку описание на армянском языке отсутствует. Например, узнать значение программного обеспечения RIMT можно из технического каталога компании Mindray. 4. «Не менее /Gray Map/; /Tint Map/;» — можно лишь предполагать, о каких функциях идет речь, поскольку описание на армянском языке отсутствует. Например, узнать значение Tint Map можно из технического каталога компании Mindray. 5. В технической спецификации указано требование «Функция расширения файлов». Просим разъяснить, какая именно функция или техническая возможность подразумевается под данной формулировкой. 6. Наличие

предварительно установленных интеллектуальных программ с функциями /например Smart/, как минимум следующих пакетов: smart 3D, smart OB, smart NT, smart FLC, smart Thyroid, smart Brest, smart Hip, smart HRI, smart Bladder. Непонятно, какое требование установил заказчик такой формулировкой, однако аналогичные формулировки встречаются в техническом каталоге компании Mindray и отсутствуют у других производителей. 7. «Image quality: HPen/HGen/HRes or HPen/HPen-FFR/HGen/HRes/HRes-FFR» — непонятно, что именно имел в виду заказчик, однако аналогичные формулировки встречаются в техническом каталоге компании Mindray и отсутствуют у других производителей. 8. Анатомический M-режим /Free Xros M/ — данная технология применяется только одним производителем, а именно компанией Mindray. Другие компании используют иные технологические решения, однако в представленной Вами спецификации прямо указана технология, применяемая именно этим производителем. 9. Для подлежащих обязательной поставке конвексного и линейного датчиков указано, что они должны быть совместимы с режимом STQ или работать в нем. Как уже отмечалось, данная технология применяется только одним производителем — компанией Mindray, тогда как другие компании используют иные технологические решения под другими наименованиями. Однако в представленной Вами спецификации прямо указана технология, применяемая именно компанией Mindray. Просим четко и обоснованно изложить, какой объективной технической или функциональной необходимостью обусловлено включение перечисленных требований в техническую спецификацию. Одновременно предлагаем пересмотреть указанные требования, при необходимости внести изменения в техническую спецификацию и привести ее в соответствие с требованиями действующего законодательства, обеспечив равные и справедливые конкурентные условия для всех потенциальных участников.

Разъяснение № 1

В ответ на запрос, представленный в отношении технической спецификации лота 1 процедуры закупки, оценочная комиссия сообщает следующее. Техническая спецификация составлена исходя из фактических клинических потребностей Заказчика, целевого назначения приобретаемого медицинского оборудования, а также необходимых технических, клинических и функциональных возможностей. Система предназначена для многопрофильного медицинского учреждения и проведения кардиологических, сосудистых, абдоминальных, акушерско-гинекологических, скелетно-мышечных, эластографических исследований и исследований в области экстренной медицины, чем обусловлены требования к режимам и программным пакетам, установленные технической спецификацией. В соответствии с пунктом 3 части 2 статьи 13 Закона Республики Армения «О закупках» характеристики предмета закупки должны быть объективно обоснованы и соответствовать потребности, для

удовлетворения которой осуществляется закупка. Следовательно, Заказчик вправе устанавливать технические, функциональные и качественные характеристики, необходимые для полного удовлетворения его фактической потребности. И использованные в технической спецификации технологические наименования, в том числе указанные через косую черту или в скобках, приведены в качестве примера соответствующей функции или технологии. К ним применяется принцип «или эквивалент». Эквивалентность предлагаемого решения будет оцениваться по обеспечиваемому им техническому и функциональному результату и должна подтверждаться официальной технической документацией производителя.

Пункт 1 — Динамическая пиксельная фокусировка (DPF)

В пункте 1.1 технической спецификации уже предусмотрена возможность применения «сканирования ZONE sonography® или эквивалентной технологии». Указанная формулировка распространяется на весь пункт, включая компонент DPF. Содержание требования к DPF заключается в обеспечении динамической фокусировки каждой точки изображения посредством программного формирования луча на этапах передачи и приема. Аналогичные решения могут предлагаться различными производителями под разными наименованиями. Следовательно, приемлема технология любого производителя, обеспечивающая требуемый эквивалентный технический и функциональный результат.

Пункт 2 — Sound Touch Elastography, STE и STQ

Требование относится не к технологии какого-либо конкретного производителя, а к возможности проведения сдвиговолновой эластографии. При данной технологии посредством акустического импульса в ткани возникают поперечные волны, скорость распространения которых зависит от жесткости ткани. Различные производители могут представлять соответствующую функцию под разными наименованиями, например: Shear Wave, ElastQ Imaging, Sound Touch Elastography, STE, S-Shearwave, SWM, SWE и др. Наименования Sound Touch Elastography, STE и STQ приведены в качестве примеров. Приемлема эквивалентная технология сдвиговолновой эластографии любого производителя.

Пункт 3 — IVF, IMT и RIMT

Указанные сокращения используются для описания следующих функций:

- **IVF** — программный пакет для измерения и подсчета фолликулов;
- **IMT** — возможность измерения толщины комплекса интима-медиа;
- **RIMT** — автоматическое измерение толщины комплекса интима-медиа в режиме реального времени.

В оборудовании различных производителей данные функции могут иметь разные наименования. Предложения будут оцениваться по возможности выполнения требуемых измерений и расчетов с применением принципа «или эквивалент».

Пункт 4 — Gray Map и Tint Map

Понятия Gray Map и Tint Map относятся к настройкам отображения и обработки ультразвукового изображения — соответственно к выбору карты градаций серого и карты оттенков изображения. Это функциональные понятия, применяемые в области ультразвуковой визуализации. Приемлемы также эквивалентные решения,

представленные под другими наименованиями, если они обеспечивают требуемые возможности отображения и обработки изображения.

Пункт 5 — «Функция расширения файлов»

Под формулировкой «Функция расширения файлов» подразумевается возможность сохранения, обработки и экспорта результатов исследования и изображений в соответствующих файловых форматах. В последующей части технической спецификации данное требование уточнено: предусмотрена возможность работы с форматами BMP, JPG, TIFF, DCM, AVI, MP4 и RAW. Следовательно, требование относится к обеспечению работы с указанными или эквивалентными им файловыми форматами.

Пункт 6 — Интеллектуальные программные пакеты

В пункте 1.2.3 технической спецификации наименование Smart приведено в качестве примера. Требование относится к автоматизации следующих клинических функций независимо от используемого производителем коммерческого наименования:

- свободная 3D-реконструкция;
- автоматическое измерение акушерской биометрии;
- автоматическое измерение воротникового пространства плода (NT);
- автоматический подсчет фолликулов;
- структурированная оценка узлов щитовидной железы;
- структурированная оценка образований молочной железы;
- измерение углов тазобедренного сустава новорожденного по методу Графа;
- расчет гепаторенального индекса;
- автоматическое измерение объема мочевого пузыря.

Приемлем программный пакет любого производителя, обеспечивающий перечисленные функции независимо от коммерческого наименования пакета.

Пункт 7 — HPen, HGen и HRes

Указанное требование относится к возможности выбора частотных режимов гармонической визуализации, которые в системах различных производителей могут быть представлены под разными наименованиями.

Функциональное назначение требуемых режимов следующее:

- **HPen (Harmonic Penetration)** — режим, ориентированный на проникновение, с низкой гармонической частотой для исследования глубоко расположенных структур;
- **HGen (Harmonic General)** — общий сбалансированный режим со средней гармонической частотой;
- **HRes (Harmonic Resolution)** — режим, ориентированный на разрешение, с высокой гармонической частотой для исследования поверхностных структур;
- **HPen-FFR и HRes-FFR** — варианты режимов проникновения и разрешения с дополнительной частотной обработкой.

Количество режимов — три или пять — зависит от типа датчика, что отражено формулировкой «ог» в технической спецификации. Приемлемо эквивалентное режимное решение любого производителя независимо от применяемых наименований.

Пункт 8 — Анатомический М-режим

Требование относится к наличию анатомического М-режима или М-режима со свободным углом. Наименование Free Xros M приведено в качестве примера данной функции.

Анатомический М-режим может быть представлен в оборудовании различных производителей под разными наименованиями. Приемлемо любое эквивалентное решение, обеспечивающее требуемую функцию анатомического М-режима.

Пункт 9 — Эластографическое применение датчиков

В перечне областей применения конвексного и линейного датчиков обозначение STE&STQ приведено в качестве примера соответствующей функции.

Требование заключается в том, чтобы поставляемые конвексный и линейный датчики обеспечивали проведение сдвиговолновой эластографии независимо от используемого производителем технологического или коммерческого наименования. Приемлемо эквивалентное решение любого производителя, которое обеспечивает проведение требуемых эластографических исследований с использованием данных датчиков.

Уважаемый участник! Наличие указанных в Вашем запросе наименований DPF, Sound Touch Elastography, STE, STQ, IVF, IMT, RIMT, Gray Map, Tint Map, интеллектуальных программных пакетов Smart, HPen, HGen, HRes и Free Xros M не означает обязательного требования приобрести оборудование какого-либо конкретного производителя. Для Заказчика определяющим является обеспечение требуемого технического, клинического и функционального результата, а не совпадение наименования соответствующей функции или технологии с наименованием, используемым каким-либо производителем. Сам по себе факт того, что некоторые производители представляют соответствующие функции в своей технической документации под такими же или схожими наименованиями, не является достаточным основанием для вывода о том, что техническая спецификация составлена для конкретного производителя или ограничивает конкуренцию. Согласно пункту 109 Порядка, утвержденного постановлением Правительства Республики Армения от 4 мая 2017 года № 526-Н, положительное заключение о результате исполнения договора может быть выдано также в случае, если качественные характеристики поставленного товара превосходят установленные договором требования и обеспечивают удовлетворение потребности Заказчика. Следовательно, решение любого производителя, которое согласно официальной технической документации производителя обоснованно обеспечивает требуемый технической спецификацией эквивалентный или более высокий технический, клинический и функциональный результат, будет оцениваться как соответствующее установленным требованиям.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю оценочной комиссии процедуры с кодом «ՀԱՊԸԲԿ-ԷԱԶԱՊՁԲ 2026-23» Т. Габриелян.

Телефон: 0312 5 65 17.

Электронная почта: c-familymedicine@mail.ru.